ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«04» նոյեմբերի 2019 թվականի N 261

ՀՀ Արմավիրի մարզպետ.
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում 2019 թվականի սեպտեմբեր ամսին Հացիկ համայնքի ղեկավարի կողմից արձակված կարգադրությունները և ընդունված որոշումները: Նշված ժամանակահատվածում ընդունվել է 2 որոշում, կարգադրություն չի արձակվել:

Առդիր 3 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Եղիազարյան

04.11.2019թ.
գ. Հացիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«10» հոկտեմբերի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 69

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի հուլիսի 3-ի N7 որոշումը

Որոշում եմ

1. ՀՀ Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Սալբի Արամայիսի Վարդանյանին ըստ օրենքի ժառանգության իրավունքով (ժառանգական գործ համար 465, գրանցված գրանցամատյանում 5309) պատկանող բնակելի տանը՝ (ծածկագիր 04-058-008-022) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հացիկ համայնքի 7-րդ փողոց 5 շենք 2 բնակելի տուն
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ 10.10.2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հացիկ համայնք, 16 փողոց, 1շենք, 093 08 08 48
hacikiguxapetaran@inbox.ru

«15» հոկտեմբերի 2019 թվականի

ՈՐՈՇՈՒՄ N 70

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱԼԲԻ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԱՆՅՈՒՏԱ ՄԱՐՏԻՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ԶԱՐԻԿ ԼԵՎՈՆԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Հացիկ համայնքի բնակիչ Սալբի Արամայիսի Վարդանյանը դիմել է Արմավիրի մարզ գյուղ Հացիկ 7-րդ փողոց 5/2 հասցեում գտնվող օրինական տնամերձ հողամասի վրա կառուցված ըստ ժառանգության իրավունքի վկայագրի ձեռք բերված բնակելի տան և շենք-շինությունների նկատմամբ իրավունքների վերականգնելու խնդրանքով, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել են մինչև 15.05.2001թ., հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, չի խախտում այլ անձանց իրավունքները, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով. հիմք ընդունելով Սալբի Վարդանյանի դիմումը

Որոշում եմ

1. Վերականգնել Արմավիրի մարզի Հացիկ գյուղի 7-րդ փողոց 5/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ քաղաքացիներ Սալբի Արամայիսի Վարդանյանի (ծնված 19.03.1967 թվականին), Անյուտա Մարտինի Հակոբյանի (ծնված 10.01.1971 թվականին) և Զարիկ Լևոնի Հակոբյանի (ծնված 14.03.1938 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը համաձայն Արմավիրի մարզի Նոտարական գրասենյակի գրանցված գրանցամատյանում N 5309, ժառանգական գործ N 465 վկայականի հիման վրա, 0.05 հա օրինական տնամերձ հողամասի վրա գտնվող թիվ 1 բնակելի տան՝ 42.3

քառ.մ (կառուցված 1966թ.), բնակելի տան՝ 57.5 քառ.մ (կառուցված 1970թ.), բնակելի տան՝ 4.5 քառ.մ (կառուցված 1980թ.), թիվ 5 պարսպի՝ 2.2 քառ.մ (կառուցված 1980թ.) նկատմամբ:

2. 2008 թվականին կառուցված թիվ 2 ծածկը՝ 2.5 քառ. մ մակերեսով, թիվ 3 անասնաշենքը՝ 13.5 քառ.մ (կառուցված 2008թ.), և թիվ 4 հավաբունը՝ 4.4 քառ.մ մակերեսով (կառուցված 2008թ.) համարել ինքնակամ:

3. 04-058-008-022 ծածկագրով 0.05 հա հողամասին կից 0.0098հա ավել տարածքը, որը չի գերազանցում տնամերձ հողամասի 20%-ը, չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքով հատկացնել անհատույց Սալբի Վարդանյանին, Անյուտա Հակոբյանին և Զարիկ Հակոբյանին:

4. Առաջարկել ՀՀ ԿԱ Ա.Գ.Կ.Պ.Կ. համապատասխան տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Սալբի Արամայիսի Վարդանյանի (ծնված 19.03.1967 թվականին), Անյուտա Մարտինի Հակոբյանի (ծնված 10.01.1971 թվականին) և Զարիկ Լևոնի Հակոբյանի (ծնված 14.03.1938 թվականին) իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին և 3-րդ կետում նշված բնակելի տան, շենք- շինությունների ու հողամասի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Եղիազարյան

գ. Հացիկ

15.10.2019թ.